ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ Ն. Սաֆարյան

«31» 08 2021թ.

# Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՊՄՀ ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2021-2022 ՈՒՍՏԱՐԻ

# ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հաշվի առնելով կորոնովիրուսային հիվանդության պայմաններում կրթական համակարգում ձևավորվող նոր իրողությունները՝ անհրաժեշտ է առաջնորդվել ԿԳՄՍ նախարարության՝ նոր կորոնովիրուսային հիվանդության պայմաններում հանրա-կրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման ուղեցույցի պահանջներով: Առաջնահերթ խնդիրը ուսումնական պրոցեսի կազմակերպման ընթացքում անվտանգության կանոնների պահպանումն է:

Ֆիզկուլտուրայի և նախնական զինվորական պատրաստություն առարկաների դասավանդումը որակական նոր մակարդակի վրա դնելու համար անհրաժեշտ է կազմակերպել մեթոդական ընթերցումներ՝ ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման և տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելու, համացանցից անվտանգ օգտվելու հմտություններ ձեռք բերելու վերաբերյալ: Առանձնակի ուշադրություն դարձնել աշակերտների ինքնուրույն հետազոտական աշխատանքների, նրանց տրամաբանական, քննադատական մտածողության և վերլուծական կարողությունների զարգացմանը:

Ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով կազմակերպել սեմինար քննարկումներ, ուսումնասիրել և գործնականում կիրառել մանկավարժական-մասնագիտական նորագույն նվաճումները՝ հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման և բաց դասերի միջոցով:

Մեթոդմիավորման ուսուցիչները մշտապես պետք է մասնակցեն ՆԶՊ և ֆիզկուլտուրա առարկաների գծով կազմակերպվող ուսումնամեթոդական հավաքներին և պարբերաբար անցնեն վերապատրաստման դասընթացներ, մշտապես աշխատեն իրենց մասնագիտական և մանկավարժական գիտելիքների կատարելագործման ուղղությամբ:

Առաջնորդվելով ավագ դպրոցի կրթական ծրագրի՝ ֆիզկուլտուրա և անվտանգ կենսագործունեություն բնագավառի առարկայական չափորոշիչներում նախանշված պահանջներով, պետք է նախատեսել այնպիսի միջոցառումներ, որոնք միտված լինեն սովորողների մեջ ֆիզիկական ներդաշնակ զարգացման պահանջ ունեցող բարոյակամային հատկանիշների, ինչպես նաև հայրենիքի պաշտպանության, արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվող և աշխատանքային գործունեության պատրաստ քաղաքացու ձևավորմանը:

## ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԸ

| Հ/Հ | Անուն, ազգանուն | ծննդ. թիվը | կրթությունը | ինչ առարկա է դասավանդում | ստաժը | որ դաս. է դասավանդում | ժամերի քանակը | որակավորում |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Բալանյան Մկրտիչ | 1948 | Բարձրա-գույն | ՆԶՊ | 46 | 12-րդ, 11-րդ, 12-րդ | 19 | Արևելագետ պատմաբան |
| 2. | Սմբատյան Արման | 1976 | Բարձրա-գույն | Ֆիզկուլ-տուրա | 21 | 12-րդ, 11-րդ, 12-րդ | 26 | Ֆիզկուլտ. ուսուցիչ |
| 3. | Մուրադյան Հարություն | 1982 | Բարձրա-գույն | Ֆիզկուլ-տուրա | 10 | 12-րդ, 11-րդ, 12-րդ | 21 | Ֆիզկուլտ. ուսուցիչ |

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԼԱՆ-ԾՐԱԳԻՐՆ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ՝ <u>ՍԵՊՏԵՄԲԵՐ</u>

| Թիվ | Օրը, ամիսը, տարեթիվը | Ուսումնադաստիարակչական աշխատանքի անվանումը կամ համառոտ բովանդակությունը | Կատարող պաշտոնյան ազգանուն անուն | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|---|
| 1. | 26.08.2021թ. | Մեթոդմիավորման 2021-2022 ուստարվա աշխատանքային պլանի, ֆիզկուլտուրա և նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն առարկաների թեմատիկ, ռազմահայրենասիրական դաստիարակության պլանների քննարկում և հաստատում: | Մեթոդմիավ. նախագահ Մ. Բալանյան, ուսուցիչներ Ա. Սմբատյան, Հ. Մուրադյան | Կատարված է 26.08.2021թ. |
| 2. | Ուստարվա ընթացքում | Նորաստեղծ ՆԶՊ կաբինետի կահավորում և համալրում նոր ուսումնամեթոդական նյութերով: | Տնօրինություն Մ/մ նախագ. Մ. Բալանյան ուսուցիչներ | |
| 3. | Մինչև 21.09.2021թ. | Կազմակերպել այցելություն եռաբլուր զոհվածների և անհայտ կորածների հուշակոթողներին՝ նվիրված ՀՀ անկախության 29-րդ տարեդարձին: | Մ/մ նախագ. Մ. Բալանյան Դասղեկներ | |
| 4. | Մինչև | Ուսումնական դասակների և սպորտ-հավա- | Մ. Բալանյան, | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 30.09.2021թ. | քական թիմերի ձևավորում | Ա. Սմբատյան, Հ. Մուրադյան | |

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԼԱՆ-ԾՐԱԳԻՐՆ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐ

| Թիվ | Օրը, ամիսը, տարեթիվը | Ուսումնադաստիարակչական աշխատանքի անվանումը կամ համառոտ բովանդակությունը | Կատարող պաշտոնյան ազգանուն անուն | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|---|
| 1. | Մինչև 10.10.2021թ. | Ծանոթացում հանրակրթական ավագ դպրոցի ծրագրի ֆիզկուլտուրա և անվտանգ կենսագործունեության բնագավառի առարկայական նոր չափորոշիչներում առաջարկվող փոփոխություններին: | Մ/մ նախագահ Մ. Բալանյան | |
| 2. | Մինչև 20.10.2021թ. | Բացատրական աշխատանք տանել ՀՀ զինապարտության մասին օրենքի պարզաբանման և նախազորակոչային տարիքի տղաների նախնական զինվորական հաշվառման ուղղությամբ: | Ռազմագիտ. ուսուցիչ Մ. Բալանյան | |
| 3. | Ուստարվա ընթացքում | Վարժարանին կցված զորամասի ուսումնական բազայի վրա գործնական պարապմունքների անցկացում: | Տնօրինություն Մ/մ նախագ. Մ. Բալանյան Զորամասի հրամանատար | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԼԱՆ-ԾՐԱԳԻՐՆ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ՝ ՆՈՅԵՄԲԵՐ

| Թիվ | Օրը, ամիսը, տարեթիվը | Ուսումնադաստիարակչական աշխատանքի անվանումը կամ համառոտ բովանդակությունը | Կատարող պաշտոնյան ազգանուն անուն | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|---|
| 1. | Ամսվա ընթացքում | Կազմակերպել մեթոդական ընթերցումներ ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառ-ման և տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելու, համացանցից անվտանգ օգտվելու հմտություններ ձեռք բերելու վերաբերյալ: | Մ/մ նախագահ, Ինֆորմատի-կայի ուսուցիչ մ/մ ուսուցիչներ | |
| 2. | Ամսվա ընթացքում | Մեթոդմիավորման ուսուցիչների կողմից կա-տարվող գրանցումների և գնահատականների՝ Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի էլեկտրոնային մատյաններ մուտքագրման վիճակը: | Փոխտնօրեն ներ, Մ/մ նախագահ | |
| 3. | Ամսվա ընթացքում | 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների աշակերտ-ների հաճախելիությունը ՆԶՊ և անվտանգ կեն-սագործունեություն առարկայի դասաժամերին: | Մ. Բալայան, դասղեկներ | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԼԱՆ-ԾՐԱԳԻՐՆ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ՝ ԴԵԿՏԵՄԲԵՐ

| Թիվ | Օրը, ամիսը, տարեթիվը | Ուսումնադաստիարակչական աշխատանքի անվանումը կամ համառոտ բովանդակությունը | Կատարող պաշտոնյան ազգանուն անուն | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|---|
| 1. | 23.12.21թ. | Մեթոդմիավորման 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի արդյունքների քննարկում (ծրագրի կատարողականը): | Փոխտնօրեն Ս. Ղուկասյան Մ/մ ուսուցիչներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2. | Մինչև 28.12.2021թ. | Ապահովել 10-րդ և 11-րդ դասարանների աշակերտների մասնակցությունը ՆԶՊ առարկայի գծով կազմակերպվող օլիմպիադայի դպրոցական փուլին: | Մ/մ նախագ. Մ. Բալանյան | |
| 3. | Ամսվա ընթացքում | Ստեղծել նպաստավոր պայմաններ 12-րդ դասարանների ֆիզկուլտուրա առարկայի ստուգարքը անցկացնելու համար: | Փոխտնօրեններ, Մ/մ նախագահ, Ա. Սմբատյան, Հ. Մուրադյան | |
| 4. | | Դեկտեմբերի 6-ին կարդալ դասախոսություն «Երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով՝ նվիրված ԱԻ աշխատակցի օրվան և Սպիտակի ավերիչ երկրաշարժին: | Մ/մ նախագահ, մ/մ ուսուցիչներ Դասղեկներ | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԼԱՆ-ԾՐԱԳԻՐՆ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ՝ ՀՈՒՆՎԱՐ

| Թիվ | Օրը, ամիսը, տարեթիվը | Ուսումնադաստիարակչական աշխատանքի անվանումը կամ համառոտ բովանդակությունը | Կատարող պաշտոնյան ազգանուն անուն | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|---|
| 1. | 27.01.2021թ. | Կազմակերպել հանդիպում Արցախյան երկրորդ պատերազմի մասնակիցների հետ՝ նվիրված Հայկական բանակի ստեղծման 29-րդ տարեդարձին: | Փոխտնօրեն. Ի. Գրիգորյան Մ/մ նախագ. Մ. Բալանյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2. | Մինչև 27.01.2021թ | Կարդալ դասախոսություն «Արցախյան երկրորդ պատերազմի հերոսները» թեմայով | Մ/մ նախագ. Մ. Բալանյան | |
| 3. | Մինչև 29.01.2020թ | ՆԶՊ և Ֆիզկուլտուրա առարկաների՝ 10-րդ և 11-րդ դասարանների կիսամյակային գնահատականների ամփոփումը (ռեֆերատ-ների պաշտպանության արդյունքները): | Մեթոդմիավ. նախագահ Մ. Բալանյան, ուսուցիչներ Ա. Սմբատյան, Հ. Մուրադյան | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԼԱՆ-ԾՐԱԳԻՐՆ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ՝ ՓԵՏՐՎԱՐ

| Թիվ | Օրը, ամիսը, տարեթիվը | Ուսումնադաստիարակչական աշխատանքի անվանումը կամ համառոտ բովանդակությունը | Կատարող պաշտոնյան ազգանուն անուն | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|---|
| 1. | Ամսվա ընթացքում | Վարժարանում սովորող նախազորակոչիկ-ների մասնակցության ապահովումը Երևանի թիվ 2 զինկոմիսարիատի կողմից կազմա-կերպվող նախնական զինվորական բժշկական ստուգումներին: | Զինղեկ փ/գնդ Մ. Բալանյան Դասղեկներ | |
| 2. | Ամսվա ընթացքում | Աշակերտների շրջանում կատարել թեկնածուների ընտրություն ռազմական ուսումնական հաստատություններում սովորելու համար: | Տնօրինություն Մ/մ նախագ. Մ. Բալանյան | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԼԱՆ-ԾՐԱԳԻՐՆ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ՝ ՄԱՐՏ

| Թիվ | Օրը, ամիսը, տարեթիվը | Ուսումնադաստիարակչական աշխատանքի անվանումը կամ համառոտ բովանդակությունը | Կատարող պաշտոնյան ազգանուն անուն | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|---|
| 1. | Ամսվա ընթացքում | Փոխադարձ դասալսումների արդյունքների քննարկում: | Մ/մ նախագահ Մ. Բալանյան Ուսուցիչներ | |
| 2. | Ամսվա ընթացքում | 10-րդ և 11-րդ դասարանների աշակերտների հաճախելիությունը ֆիզկուլտուրա առարկայի դասաժամերին: | Մ/մ նախագահ Մ. Բալանյան Ֆիզկուլտ. ուսուցիչներ | |
| 3. | 20.03.2021թ | Կարդալ դասախոսություն «Արտակարգ իրավիճակներում աշակերտների տարհանման կազմակերպումը» թեմայով: | Տնօրինություն Մ/մ նախագահ ուսուցիչներ | |
| | | | | |
| | | | | |

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 2021-2022ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԼԱՆ-ԾՐԱԳԻՐՆ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ՝ ԱՊՐԻԼ

| Թիվ | Օրը, ամիսը, տարեթիվը | Ուսումնադաստիարակչական աշխատանքի անվանումը կամ համառոտ բովանդակությունը | Կատարող պաշտոնյան ազգանուն անուն | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|---|
| 1. | Ամսվա ընթացքում | Արտադասարանական պարապմունքներին հաճախող աշակերտների մասնագիտական կարողությունների ամփոփում: | Մ/մ նախագահ, ուսուցիչներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2. | Ամսվա ընթացքում | Ձևավորված հավաքական թիմերի (ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, շախմատ, սեղանի թենիս, հրաձգություն) մարզական վիճակը: | Մ/մ նախագահ Ֆիզկուլտ. ուսուցիչներ | |
| 3. | 24.04.2021թ | Այցելություն Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու Մեծ եղեռնի զոհերի հիշատակին: | Տնօրինություն, Մ/մ նախագահ ուսուցիչներ | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 2021-2022ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԼԱՆ-ԾՐԱԳԻՐՆ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ՝ ՄԱՅԻՍ

| Թիվ | Օրը, ամիսը, տարեթիվը | Ուսումնադաստիարակչական աշխատանքի անվանումը կամ համառոտ բովանդակությունը | Կատարող պաշտոնյան ազգանուն անուն | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|---|
| 1. | 25.05.21թ. | «Լավագույն մարզական դասարան». մ/մ հաշվետվությունը: | Ֆիզկուլտ. Ուսուցիչներ Դասղեկներ | |
| 2. | 23.04.21թ.- 15.05.21թ. | 11-րդ դասարանների պատանիների մասնակցության ապահովումը մեկօրյա ռազմադաշտային պարապմունքներին | Մ. Բալանյան, դասղեկներ | |
| 3. | Ամսվա ընթացքում | 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների աշակերտների հաճախելիությունը ՆԶՊ առարկայի դասաժամերին: | Մ/մ նախագ. Մ. Բալանյան | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

**ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԼԱՆ-ԾՐԱԳԻՐՆ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ՝ ՀՈՒՆԻՍ**

| Թիվ | Օրը, ամիսը, տարեթիվը | Ուսումնադաստիարակչական աշխատանքի անվանումը կամ համառոտ բովանդակությունը | Կատարող պաշտոնյան ազգանուն անուն | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|---|
| 1. | Ամսվա ընթացքում | Մեթոդմիավորման 2021-2022 ուս. տարվա երկրորդ կիսամյակի արդյունքների ամփոփում (ծրագրի կատարողականը): | Փոխտնօրեն Ս. Ղուկասյան Մ/մ ուսուցիչներ | |
| 2. | Ամսվա ընթացքում | Մեթոդմիավորման՝ 2022-2023 ուս. տարվա խնդիրները աշակերտների ֆիզիկական պատրաստվածության և ռազմահայրենա-սիրական դաստիարակության մակարդակի բարձրացման ուղղությամբ: | Մ. Բալանյան, դասղեկներ | |
| | | | | |

Մեթոդմիավորման նախագահ՝ Մկրտիչ Բալանյան